ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ

https://doi.org/10.59982/18294359-25.2-hl-08

Արմինե Արկադյայի Հովսեփյան
Հայցորդ
ՀԵՀ, իրավագիտության ամբիոն
aarminehovsepyan@gmail.com

Ամփոփագիր

Վարչական հայեցողության կիրառման արդյունքում ձևավորված կոռուպցիոն դրսևորումներն արդիական են անգամ զարգացած ժողովրդավարական պետություններում, որտեղ վարչական մարմինների պաշտոնատար անձինք համատեղում են պետական պաշտոններն իրենց կամ այլ անձանց անձնական նպատակների իրականացման հետ:

Հոդվածի նպատակը վարչական հայեցողության կիրառմամբ կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն է և հնարավոր միջոցներով դրանք կանխելը՝ չեզոքացնելով հոգեբանական խոր արմատների առաջացումը և փոխելով մարդկանց գիտակցության մեջ ձևավորված այն տեսակետը, որ կոռուպցիայի դեմ պայքարելն անիմաստ է կամ անարդյունավետ:

Վարչական մարմնի պաշտոնատար անձի կոռուպցիոն նպատակների բացառման, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման, դրա դեմ արդյունավետ և ներգործուն պայքարելու համար՝ հոդվածում ներկայացվում են կոռուպցիայի առաջացմանը նպաստող իրավիճակները և դրանց կանխարգելման եղանակները: Կոռուպցիայի ծագման հնարավոր պատճառները բացառելու համար մշակվել են հայեցողական վարչական ակտին ներկայացվող նախադրյալներ, որոնց հետևողական կատարմամբ վարչական մարմինը կբացառի կամ հնարավորինս կխուսափի կոռուպցիոն դրսևորումներից:

Հոդվածում անդրադարձ ենք կատարում նաև հայեցողական լիազորությունների կիրառման վերաբերյալ մեթոդաբանության մշակման անհրաժեշտությանը՝ տալով կոռուպցիայի սահմանումը մեթոդաբանության տեսանկյունից, դրա նպատակների իրականացման համար հիմք համարվող գործոնները՝ խրախուսելով վարչական մարմնի բարեխիղճ և պատասխանատու վարչարարության իրականացումը:

Հիմնաբառեր. Կոռուպցիա, չարաշահում, վարչական հայեցողություն, հայեցողական վարչական ակտ, վարչական մարմին:

Ներածություն

Կոռուպցիա տերմինն առաջացել է լատիներեն «corruptus» և «corrumpere» բառերից, որոնք նշանակում են ապականում, աղճատում, աղավաղում, կաշառում և այլն [Բառարան]:

Եվրոպայի խորհրդի «Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվեցիայի» 2-րդ հոդվածի համաձայն՝ «կոռուպցիա» նշանակում է՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կաշառք կամ որևէ անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում

պահանջելը, առաջարկելը, տալը կամ ընդունելը, որը խախտում է կաշառք, անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում պահանջողի կողմից ցանկացած պարտականության պատշաճ կատարումը կամ պահանջվող վարքագիծը [«Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիա»]:

Կոռուպցիայի հասկացության և դրա առաջացման պատճառների վերաբերյալ իրենց դիտարկումներն են հայտնել մի շարք տեսաբաններ և միջազգային կազմակերպություններ:

Կոռուպցիայի ստեղծման «թերություններ» պարունակող իրավական նորմերը «պոտենցիալ վտանգ են, քանի որ դրանք ստեղծում են «օրինական» պայմաններ և նախադրյալներ քաղաքացիական ծառայողների կոռուպցիոն գործողությունների համար [Ноздрачев, 34]:

Գործադիր մարմիններում կոռուպցիայի դրսևորման հիմնական պայմանները ներառում են պաշտոնյաների գործողություններում վարչական հայեցողության ազատության լայնությունը, որը ստեղծում է վարչական խոչընդոտներ [Чистов, 7]:

Հանրային իշխանության ռեսուրսների տիրապետումը և նույնիսկ դրանց հայեցողական տնօրինման հնարավորությունն ինքնին կոռուպցիայի տեղիք չեն տալիս, այլ միայն ինստիտուցիոնալ պայմաններ են ստեղծում դրանց համար: Կոռուպցիան տեղի է ունենում, երբ առկա է անօրինականություն՝ օգտագործելով նման ռեսուրսներն անձնական (կամ խմբակային) օգուտներ ստանալու համար՝ ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական [Rose-Askerman, 31]: Ըստ այդմ, հայեցողական լիազորությունները դառնում են սուբյեկտի ոչ պատշաճ (այդ թվում՝ կոռուպցիոն) վարքագիծ հրահրող գործոն [Мошкин, 233]:

Պետական և մունիցիպալ կառավարման ոլորտում հայեցողության իսպառ վերացումը ոչ միայն անհնար է, այլև որոշ դեպքերում անիրագործելի: Հետևաբար, չպետք է խոսել այս ոլորտում հայեցողության արմատական արգելքի մասին, այլ՝ նման լիազորությունների պատշաճ իրականացման ալգորիթմի և չափանիշների մշակման և նորմատիվային համախմբման մասին [Литварина, 54]:

Ինստիտուցիոնալ տեսանկյունից կոռուպցիոն երեք հիմնական գործոն է առանձնացվում՝

1) պաշտոնյաների և քաղծառայողների չափազանցված լիազորությունները,

2) նրանց անպատասխանատվությունը,

3) սխալ մոտիվացիան:

Սա նշանակում է, որ կոռուպցիայի հավանականությունը մեծանում է կառավարական կարգավորման շրջանակների ընդլայնմամբ, կոռուպցիոն պրակտիկաները հայտնաբերելու և պատժելու կարողության նվազմամբ և ազնիվ աշխատանքի համար խթանների բացակայությամբ: Այսպիսով, կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ միջոցները կարելի է բաժանել երեք կատեգորիայի՝

1) պաշտոնյաների և քաղաքացիական ծառայողների լիազորությունների սահմանափակում,

2) պատասխանատվության բարձրացում,

3) ճիշտ մոտիվացիայի ստեղծում [Братановский, Зеленов, 312]:

«Կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումների վերաբերյալ» Եվրահանձնաժողովի զեկույցում նշվում է, որ պետական ձեռնարկությունները, անբավարար օրենսդրության և բարձր պաշտոններում քաղաքականացված նշանակումների պայմաններում, դառնում են կոռուպցիայի լուրջ աղբյուր: Զեկույցում, մասնավորապես, նշվում են պետական ձեռնարկությունների հետ կապված կոռուպցիոն այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են՝ միջոցների ոչ թափանցիկ բաշխումը, ուռճացված գներով ծառայությունների գնումը, միջոցների յուրացումը և փողերի լվացումը [Washington, 8]:

Ակադեմիական հակակոռուպցիոն հետազոտությունների հեղինակ Քլիթգարդը ձևակերպել է կոռուպցիայի առաջացման պատճառների ֆորմուլան՝ սահմանելով Կ=Մ+Հ-Հ (կոռուպցիան հավասար է մենաշնորհ+հայեցողություն-հաշվետվողականություն) [Stephenson, 26]: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» (ԹԻ) միջազգային հակակոռուպցիոն կազմակերպության սահմանման համաձայն՝ կոռուպցիան ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է՝ անձնական օգուտ ստանալու նպատակով [Հակակոռուպցիոն կենտրոն]:

Կոռուպցիան բաժանվում է հետևյալ տեսակների՝

1. վարչական կոռուպցիա (վարչարարական կամ «մանր» կոռուպցիա), որը սոցիալապես վտանգավոր երևույթ է, ինչի դեպքում կողմերից մեկը պետական ծառայողն է կամ որոշակի լիազորություններ իրականացնող անձը, և դրսևորվում է այդ անձանց կողմից իրենց պաշտոնական դիրքի դիտավորյալ օգտագործմամբ՝ անձնական նպատակներով: Վարչական կոռուպցիան առավել հեշտ է իրականացվում վարչական մարմնի կողմից, երբ օրենսդիրը վերապահում է հայեցողական լիազորություններ, որով վարչական մարմինն ապահովագրում և թաքցնում է իր կոռուպցիոն գործունեությունը:

2. Խոշոր կոռուպցիա, որի դեպքում օրենսդիրը նախատեսել է քրեական պատասխանատվություն՝ սահմանելով չափերը: Խոշոր կոռուպցիայի առաջացման վտանգն ավելի խորն է ընկալվում, երբ պաշտոնատար անձինք իրենց գործունեության կամ անգործության համար ակնկալում եմ շահագրգիռ անձից ստանալ խոշոր գումար: Վերոգրյալը հնարավորինս նվազեցնելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներին և բարձրաստիճան պաշտոնատար անձանց արգելվում է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

3. Քաղաքական կոռուպցիա, որը ներթափանցում է հասարակության կենսագործունեության ամենակարևոր ոլորտները՝ խոչընդոտելով դրանց բնականոն զարգացմանը: Քաղաքական կոռուպցիան բարձրաստիճան պետական պաշտոնյաների կողմից քաղաքական իշխանության չարաշահումն է անձնական հարստացման նպատակով և օգտագործումն է կոռումպացված միջոցներն անձնական իշխանությունը պահելու համար:

Կոռուպցիայի տեսակները վկայում են, որ դրանց առաջացման հիմքերից մեկն էլ քաղաքական գործիչներին տրամադրված հայեցողական լիազորությունների ծավալն է, որը նպաստավոր պայմաններ է ստեղծում անբարեխիղճ քաղաքական գործիչների համար կոռուպցիոն նպատակների իրականացման համար: Ընդ որում, վարչական

կոռուպցիան հայեցողական լիազորությունների կիրառելիության ընտրության հարցի դեպքում կարող է հեշտությամբ վերաճել խոշոր կոռուպցիայի՝ ընդգրկելով նաև քաղաքական կոռուպցիայի դրսևորումներ։

Վերոգրյալի հաշվեգրմամբ՝ ամբողջ աշխարհում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, լայն պայքար է սկսվել կոռուպցիոն դրսևորումների նկատմամբ։

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 2003 թվականի հոկտեմբերի 31–ին Նյու Յորքում ընդունվել է «Կոռուպցիայի դեմ կոնվենցիան», որի նպատակներն են՝

ա) կոռուպցիան կանխարգելելուն և դրա դեմ ավելի արդյունավետ և ներգործուն պայքարելուն ուղղված միջոցների խրախուսումը և ուժեղացումը,

բ) կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարում, այդ թվում՝ արժեքների վերադարձման ուղղությամբ միջազգային համագործակցության և տեխնիկական օգնության խրախուսումը, դյուրացումը և օժանդակումը,

գ) պետական գործերի և պետական սեփականության ազնիվ, պատասխանատու և պատշաճ կառավարման խրախուսումը [Կոռուպցիայի դեմ կոնվենցիա]։

Վերջին ժամանակներում Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական իրավակարգավորումներով առավել խստացվել և հստակեցվել են արգելքներն ու պատասխանատվության սահմանները, ինչպես քաղաքական գործիչների, այնպես էլ առևտրային գործունեություն ծավալած անձանց կուտակած միջոցների օրինաչափության մասով, ինչպես նաև վարչական մարմիններն աստիճանաբար փոխում են իրենց մոտեցումը վարչարարության իրականացման հարցում՝ հրաժարվելով չափազանց վարչարարական և ոչ արդյունավետ գործունեությունից։ Օրենսդրական փոփոխությունների արդյունքում վերանայվել է նաև հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց բարեվարքության համակարգը, ստեղծվել են կոռուպցիայի կանխարգելման և էթիկայի հանձնաժողովները, գործի է դրվել ազդարարման համակարգը, նաև վարչական պատասխանատվություն է սահմանվել հայտարարագրման հարցերով, կարևոր էին հակակոռուպցիոն դատարանների ստեղծումը, հակակոռուպցիոն ռազմավարությունների մշակումը։

Մեր դիտարկմամբ, կոռուպցիայի առաջացման հնարավոր պատճառները բացառելու համար հայեցողական լիազորությունների կիրառմամբ վարչական ակտը պետք է ընդունվի հետևյալ նախադրյալների հաշվեգրմամբ՝

1.Վարչական ակտը չպետք է նախատեսի անձանց և կազմակերպությունների համար ընդհանուր ընթացակարգից բացառություններ սահմանելու հնարավորություն՝ կախված վարչական մարմնի հայեցողությունից, քանի որ մեծանում է հավանականությունը հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման մասով։

2. Վարչական ակտում չպետք է լինեն ակնհայտ գնահատողական բնույթի հասկացություններ, իրավական տեխնիկայի կանոնների խախտումներ, որոնք կարող են վկայել կամայական դրսևորման կամ կոռուպցիոն գործոնների հնարավոր առկայության մասին։

3. Վարչական ակտում չպետք է ընդգրկել օրենքի կիրարկումն ապահովող այնպիսի ենթաօրենսդրական ակտեր, որոնց միջոցով վարքագծի ընդհանուր պարտադիր կանոնների սահմանումը կարող է խախտել անձանց և կազմակերպությունների իրավունքներն ու օրինական շահերը, եթե այդ ակտը կարգավորում է օրենքի առարկա հանդիսացող հարցեր՝ թույլ տալով նորմի բացակայությունը լրացնել վարչական մարմնի հայեցողությամբ:

4. Վարչական ակտը պետք է լինի հրապարակային՝ մեծացնելով վարչական մարմինների տեղեկատվության հրապարակայնությունը՝ բացառությամբ գաղտնիք պարունակող և անձնական տվյալների վերաբերյալ տեղեկատվության: Վարչական մարմնի կողմից ընդունված յուրաքանչյուր վարչական ակտի հրապարակումը՝ ապահովելով դրա հասանելիությունը հանրության համար, որը կարելի է իրականացնել վարչական մարմնի էլեկտրոնային պաշտոնական կայքէջում հրապարակելու միջոցով:

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կոռուպցիայի վերացման հարցում չափից ավելի մեծ միջոցներ ձեռնարկելը կարող է պահանջել բարձր տնտեսական ծախսեր՝ ստեղծելով լրացուցիչ բեռ հասարակության համար:

Պայքարի չափից ավելի օրենսդրական ուժեղացմամբ կոռուպցիան զրկում է վարչական համակարգը ճկունությունից, իսկ բնակչությանը՝ քաղաքացիական ազատությունից [Латов, 25]:

Կոռուպցիայի դեմ պայքարի ծախսերի և կոռուպցիայի հետևանքով առաջացած կորուստների հավասարակշռության հնարավոր ապահովումն է վարչական մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների կիրառման վերաբերյալ (ուղղված կոռուպցիայի նախականխմանը) մեթոդաբանության մշակումը, որը կարող է սահմանել վարչական ակտերում կոռուպցիային բնորոշ գործոններն ու դրսևորումները, ինչպես նաև դրանց մշակման և ընդունման ընթացքում կոռուպցիայի բացահայտման ու կանխարգելման մեխանիզմները:

Կոռուպցիոն գործոններ կարող են համարվել կարգավորող իրավական ակտերի հայեցողական լիազորություններ սահմանող այն դրույթները (այդ թվում՝ իրավական տեխնիկայի կանոնների թերությունները), որոնք նպաստում են վարչական ակտի ընդունմամբ կոռուպցիայի դրսևորմանը, ինչպես նաև կարող են հիմք հանդիսանալ կոռուպցիոն պրակտիկայի ձևավորման համար՝ ապահովելով կոռուպցիոն գործողությունների օրինականությունը:

Օրենքով վարչական մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունները կարող են դիտարկվել որպես կոռուպցիա առաջացնող լիազորություններ:

Կոռուպցիայի կանխարգելման հրամայականը ենթադրում է դրա հետևանքով առաջացած հնարավոր կորուստների նվազեցում և կանխարգելման միջոցառումների ձեռնարկում՝ պայմանավորված վարչական մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների հնարավոր կիրառմամբ: Հայեցողական լիազորությունների կիրառման տեսանկյունից այն ունի երկակի նշանակություն. ինչպես կարող է խոչընդոտել, այնպես էլ նպաստել չարաշահման դրսևորմանը՝ հիմք ստեղծելով դրա պրակտիկայի ձևավորման համար, ինչը վարչական մարմնին օրենքով վերապահված

լիազորությունների իրականացմամբ ևս կարող է չարաշահման ռիսկ պարունակել, որի լավարկումը կարող է պայմանավորված լինել վարչական մարմիններին օրենքով վերապահված հայեցողական լիազորությունները չկիրառելու կամ ոչ իրավաչափ կիրառելու հետևանքով վարչական ակտի ընդունմամբ. հայեցողական լիազորությունների կիրառմամբ (չկիրառմամբ) չարաշահումների կանխարգելման միջոցառումների մշակմամբ և իրականացմամբ:

Հայեցողական լիազորությունները վարչական մարմնին հնարավորություն են տալիս սեփական հայեցողությամբ կիրառել դրանք՝ չբացառելով հնարավոր շեղումների առաջացումը, որոնք կարող են չարաշահման, այդ թվում՝ կոռուպցիոն տարրեր պարունակել: Նշվածն առավել ակնհայտ է դառնում, երբ վարչական մարմնին տրվում են լայն հայեցողական լիազորություններ, որոնք օրենքում հայտնի են «իրավունք ունի» եզրույթով: Դրանք առաջացնում են անձի իրավունքների չարաշահում, իրավունքների շրջանակի ընտրովի փոփոխություն, համապատասխան դրույթի մեկնաբանություն՝ վարչական մարմնի պաշտոնատար անձի կամ նրա համար ցանկալի անձի օգտին:

Եզրակացություն

Այսպիսով, կոռուպցիան (այդ թվում՝ չարաշահումը)՝ վարչարարություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձի, պետական և (կամ) համայնքային ծառայողի կողմից անձնական կամ այլ շահադիտական նպատակով, գործողությամբ կամ անգործությամբ պաշտոնեական լիազորությունների չարաշահումն է, որը փոխկապակցված է վարչական մարմնին օրենքով վերապահված հայեցողական լիազորություններով:

Վարչական մարմնում հայեցողական լիազորությունների ոչ իրավաչափ կիրառումը ոչ միայն խաթարում է անձանց իրավունքները և օրինական շահերը, այլև նվազեցնում է վարչական մարմնի գործունեության նկատմամբ վստահությունը: Այն ենթադրում է չարաշահման դրսևորման ձև, որը պարտադիր չէ, որ ունենա ֆիսկալ բնույթ, քանի որ կոռուպցիան ցանկացած շահադիտական ակնկալիքն է:

Վարչական մարմնի պաշտոնատար անձն, ով իրավասու է կիրառել հայեցողական լիազորություն «փոխշահավետ գործարք է կնքում ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ», որի արդյունքում վարչական մարմինը հայեցողական լիազորությունը կիրառում է ի շահ շահագրգիռ անձի՝ որոշակի ակնկալիքով՝ հանգեցնելով վարչական ակտի ընդունման կամ անգործության դրսևորմամբ այն չընդունելուն, ինչն էլ կարող է չարաշահման դրսևորման տարրեր պարունակել՝ առաջացնելով շահերի անհավասարակշռություն: Վարչական մարմինը հայեցողական լիազորությունների չկիրառման դեպքում պարտավոր է ընդունել վարչական ակտ, եթե նման պարտավորություն նախատեսված է օրենքով: Տվյալ դեպքում վարչական մարմինը ոչ միայն չի կիրառում հայեցողական լիազորություն, այլև չի ընդունում վարչական ակտ՝ դրսևորելով անգործություն: Այն դեպքերում, երբ վարչական մարմինը դրսևորում է անգործություն՝ չկիրառելով հայեցողական լիազորություններ կամ մասամբ կիրառելով դրանք, կասկած է առաջանում վարչական մարմնի պաշտոնատար անձի գործողությունների իրավաչափության և հնարավոր չարաշահման դրսևորման վերաբերյալ:

Չարաշահման ծագումը վարչական մարմիններում պայմանավորված է նրանց վերապահված հայեցողական լիազորությունների ոչ իրավաչափ կիրառմամբ պաշտոնատար անձանց անբարեխիղճ աշխատանքով, ոչ պատշաճ վարչարարության իրականացմամբ պաշտոնատար անձի կոռուպցիոն նպատակների հետապնդմամբ, հասարակության նկատմամբ ցածր պատասխանատվությամբ, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում է սուբյեկտիվ վարչարարության հիմք:

Ցանկացած չարաշահման գործոնի դրսևորման դեպքում պետք է բացահայտվի դրա՝ կիրառման իրական նպատակը, արդյո՞ք այն ներառում է կեղծ նպատակ, թե՝ ոչ, ինչպես նաև վարչական ակտում դիտավորյալ կամ անզգույշ ներառված լինելու հանգամանքը, որից հետո վարչական մարմինը պարտավոր է ուղղել վարչական ակտում առկա թերությունները կամ ընդունել նոր վարչական ակտ՝ ուժը կորցրած ճանաչելով նախկինը՝ քննարկելով պաշտոնատար անձին (անձանց) պատասխանատվության ենթարկելու հարցը: Չարաշահման դեմ պայքարը դրսևորվում է պետության, պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակության, կազմակերպությունների և անհատների գործունեությամբ՝ իրենց լիազորությունների սահմաններում:

Մեր դիտարկմամբ, չարաշահման դեմ պայքարի միջոցառումների մշակմամբ և իրականացմամբ հնարավոր է հասնել դրա նվազեցմանը, քանի որ անիրատեսական է խոսել դրա ամբողջական վերացման մասին: Չարաշահման նվազեցումը հնարավոր է իրականացնել՝

1. հայեցողական լիազորությունների շրջանակի հնարավորինս նեղացմամբ.
2. հսկողության և վերահսկողության ինստիտուտների կատարելագործմամբ:

Հայեցողական լիազորությունները բարենպաստ պայման են ստեղծում «ուռճացված» պահանջների չարաշահման դրսևորման համար: Չարաշահման այս գործոնների տարբերությունն այն է, որ օրենքի չափից դուրս խիստ պահանջներն արդեն իսկ կոռուպցիա են առաջացնում, մինչդեռ հայեցողական լիազորությունները կոռուպցիոն գործոն կարող են պարունակել միայն այն դեպքում, երբ վարչական մարմնի պաշտոնատար անձին տրվում է օրենքով նախատեսված պահանջներն ի շահ իրեն կամ այլ անձի կիրառելու և դրանք կիրառելուց հրաժարվելու միջև ընտրության հնարավորություն: Այսպիսով, վարչական մարմնին, հնարավորություն տալով ընտրություն կատարել տարբեր կարգավորումների միջև՝ հստակ չափանիշների բացակայության դեպքում, այն չարաշահման դրսևորման հիմք կարող է հանդիսանալ: Օրինակ, վարչական մարմինը օրենքով նախատեսված կարգով հնարավորություն ունի նախքան քաղաքացուն կենսաթոշակ նշանակելը վերջինիս աշխատանքային գործունեության վերաբերյալ այլ պետական մարմիններ հարցում կատարելու կամ չկատարելու: Այսինքն, վարչական մարմնին տրված է սեփական հայեցողությամբ ընտրելու այս երկու տարբերակներից մեկը: Դրանցից որևէ մեկի ընտրությունը կարող է վկայել հնարավոր չարաշահման մասին:

Բոլոր այն դեպքում, երբ «ուռճացված» պահանջները զուգորդվում են հայեցողական լիազորությունների կիրառման հետ, շատ ավելի դժվար է չարաշահման

բացահայտելը, քանի որ կայացված վարչական ակտը միանգամայն օրինական է, այսինքն՝ կայացվել է օբյեկտիվ որոշում:

Այսպիսով, վարչական մարմիններին տրված լայն հայեցողական լիազորությունները մեծացնում են հավանականությունն իրավասու պաշտոնատար անձանց կողմից նման լիազորությունների օգտագործումն ի շահ իրենց, որը չի ենթադրում բացառապես ֆինանսական շահ, այլ՝ իր համար ցանկալի անձի օգտին որևէ գործողություն (անգործություն) կատարել, իսկ հայեցողական լիազորությունները դառնում են վարչական մարմնի կոռուպցիոն վարքագիծ հրահրող գործոն: Նման պայմաններում օրենսդիրը պետք է հնարավորինս սահմանափակի վարչական մարմնին տրված հայեցողական լիազորությունները՝ ընդլայնելով հսկողության և վերահսկողության ինստիտուտների դերակատարումն այդ հարցում:

Վարչական մարմնի համար հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության ապահովումը և չարաշահման նվազեցումն առավել հեշտ է իրականացնել հսկողության և վերահսկողության մարմինների գործունեության ընդլայնմամբ, քանի որ դրանք պարտավոր են հետևել ստորադաս վարչական մարմնի գործունեությանը: Վարչական հսկողությունը և վերահսկողությունը ոչ միայն նպաստում են հայեցողական վարչաիրավական նորմերի իրականացմանն, այլև դրանց գործնական կիրառման կարևորագույն միջոց են հանդիսանում:

Հսկողության և վերահսկողության մարմիններին է վերապահված հնարավորություն՝ վերացնելու հայեցողական լիազորությունների կիրառմամբ ընդունված վարչական ակտերը, այդ թվում՝ կոռուպցիոն դրսևորումները: Վարչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտի վերանայումը պայմաններ է ստեղծում վարչական մարմնի պաշտոնատար անձի կողմից առավել հետևողական լինել վարչարարության իրականացման հարցում՝ խուսափելով չարաշահման հնարավոր առաջացումից: Այսինքն, նշված մարմինների հետևողական մոտեցումը հայեցողական լիազորությունների կիրառման դեպքում կարող է նվազեցնել դրա հնարավոր դրսևորումները:

Մեր դիտարկմամբ, ոչ միայն հսկողության և վերահսկողության մարմինների հետևողական գործունեության, այլև քաղաքացիական վերահսկողության դեպքում է հնարավոր խոսել վարչական մարմնի կողմից չարաշահումների կանխարգելման մասին: Մասնավորապես, հասարակության յուրաքանչյուր անդամ օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն ստանալու իրավունք ունի, հետևաբար որքան անձը հետևողական լինի իր իրավունքն իրացնելու հարցում, այնքան կնպաստի վարչական մարմնի կողմից հնարավոր չարաշահումների բացառմանը:

Վարչական մարմնի գործունեության վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության ապահովումը կարող է վկայել որպես չարաշահման դեմ պայքարի արդյունավետ միջոց: Ներկայումս ինչպես վարչական մարմինը, այնպես էլ հասարակությունը շահագրգռված է պետական կառավարման ոլորտում թափանցիկության և հրապարակայնության զարգացմամբ (բացառությամբ՝ գաղտնիք պարունակող տեղեկատվությանը): Վարչական մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկատվության լայն հասանելիության կարիք է առաջանում, իսկ հասարակության անդամներին հետաքրքրող տեղեկատվության ամենամեծ ծավալին

տիրապետում են վարչական մարմինները: Տեղեկատվության հրապարակայնությունը երաշխավորում է վարչական մարմնի գործունեության արդյունավետությունը՝ հնարավորինս բացառելով չարաշահման դրսևորումները: Այսինքն, վարչական մարմնի և հասարակության միջև տեղեկատվություն տրամադրելու և ստանալու փոխադարձ կապի ամրապնդումը կարող է հիմք ստեղծել վարչական մարմնի գործունեության հետևողական և իրավաչափ կազմակերպման համար՝ վերացնելով հնարավոր բոլոր բացասական հետևանքները:

Այսպիսով, պետական կառավարման ձևավորումն անհնար է առանց հսկողության և վերահսկողության, ինչպես նաև հասարակության ակտիվ մասնակցության ու տեղեկատվական ներուժի բացահայտման: Արդիականության մարտահրավերներին համարժեք պատասխան տալու և վարչարարության զարգացման կայունության համար անհրաժեշտ է կարևորել այս ինստիտուտների և վարչական մարմնի փոխգործակցության ապահովումը, որոնք վերահսկողության յուրահատուկ միջոց են վարչական մարմնի գործունեության նկատմամբ:

Գրականության ցանկ

1. Washington D., Center for Democracy and Governance. A Handbook on Fighting Corruption. 1999. 33 p.
2. Латов Ю., Экономика вне закона (очерки по теории и истории теневой экономики). Московский общественный научный фонд, 2001. 280 с.
3. Чистов А., Административно-правовое регулирование противодействия коррупции в федеральных органах исполнительной власти в современных условиях. М.,2010. 233с.
4. Rose-Askerman S., The Political Economy of Corruption, Corruption and the Global Economy, Ed. K.A. Elliot. Washington DC:Institute for International Economics. 1997. p. 31-60.
5. Stephenson M., Klitgaard's Misleading "Corruption Formula". 2014. p. 25-28.
6. Братановский С., Зеленов М., Административное и муниципальное право. №4, 2016. с. 311-315.
7. Литварина А., Дискреция как фактор коррупции в сфере государственного и муниципального управления, УДК 35.351, Интерактивная наука,| 5 (70) 2022. с. 54-55.
8. Мошкин С., Коррупционные зоны информационного обслуживания власти, УрО РАН, УДК 353. 2014. с. 230-237.
9. Ноздрачев А., Коррупция как правовая проблема в вопросах и ответах, Адвокат. N 10. 2007. с. 34-49.
10. «Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիա», 04.11.1999:
11. «Կոռուպցիայի դեմ կոնվենցիա», 31.10.2003:
12. Հակակոռուպցիոն կենտրոն, transparency.am, վերջին մուտքը՝ 24.09.2025:
13. Բառարան, www.nayiri.com, վերջին մուտքը՝ 24.09.2025:

THE AUTHORITY AS A REASON FOR THE PROGRESS OF CORRUPTION RISKS AND THE CONDITIONS FOR ITS PREVENTION

Armine Hovsepyan
Researcher
EUA, Chair of Law
aarminehovsepyan@gmail.com

Abstract

Manifestations of corruption formed as a result of the use of administrative discretion are current even in developed democratic states, where officials of administrative bodies combine public positions with the realization of their own or other persons' personal goals.

The purpose of the article is to reveal the manifestations of corruption using administrative discretion and to prevent them by possible means, neutralizing the emergence of deep psychological roots and changing the view formed in people's consciousness that fighting corruption is pointless or ineffective.

In order to exclude corrupt goals of an official of an administrative body, as well as to prevent corruption, and effectively and efficiently combat it, the article presents situations that contribute to the emergence of corruption and methods for preventing them. In order to exclude possible causes of corruption, prerequisites presented in a discretionary administrative act have been developed, with the consistent implementation of which the administrative body will maximally exclude or avoid corruption.

In the article, we also refer to the need to develop a methodology for the use of discretionary powers, giving the definition of corruption from the point of view of the methodology, the factors considered as the basis for the implementation of its goals, encouraging the implementation of conscientious and responsible administration of the administrative body.

Keywords: Corruption, abuse, administrative discretion, discretionary administrative act, administrative body.

Ներկայացվել է՝ 09.09.2025թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 27.11.2025թ.